

ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ

ՆԱՏԵՐ ԳՐԻՉ ԵՒ ՆԱՏԵՐԵԱՆՔ

Մեր զբանութեան պատմութեան մէջ պատուաւոր էջ մը կը զբանէ Նատեր գրիչ, ոչ միայն իր կատարած ընդօրինակութիւններով, այլ նաև նահանգեան ըլլալով ճարտար զրիչներու և ծաղկողներու ընտանիքի մը: Իր երեք որդիները — Աւետիս, Ստեփանոս և Գրիգոր— ուսած են Հայրենի արուեստը և արդիւնաւորապէս կիրարկած, առաջին երկու քը մանաւանդ: Ապա Ստեփանոսի որդին Յովհաննէսն ալ իր կարդին շարունակած է ծաղկողի աշխատանքը՝ տալով իր լուսան հայ մշտիցի զանձանակին: Նատերեանք առաւելապէս աշխատած են Խրիմի մէջ՝ Սուրբաթ քաղաքը:

Ներկայ յօդուածով համառօտակի կը ներկայացնենք Նատերեանց երեք սերունդի պատկանող զրիչները և մեզի ծանօթ իրենց աշխատանքիները:

Ա. Նատեր Գրիչ, 1300? – 1370?, աշակերտ Յակոբի (Յուցակ Զեռ-Անկիւրիոյ, էջ 776): Ամուսինը՝ Մշաւան, մեռած 1365ին: Զաւակները՝ Յովհաննէս, վաղամեռիկ (1324–1344), Աւետիս սարկաւագ, Ստեփանոս քահանայ, Գրիգոր Եպիսկոպոս, և Հեղինէ: Իր աշխատանքներէն ծանօթ են աւելի քան տասնեակ մը, կատարուած 1339–1363 թուականներուն: Կը ներկայացը՝ նենք թուականի կարգով:

1. Աւետարան, 1339ին, Սրացու օրինակէ, կամաւ «Առաքեալ չնորհագրդ նկարչէ» — Զեռ. Երեւանի, թ. 7837:

2. Աւետարան, 1341ին աւարտած է, Գէորգ սարկաւագի փափաքով: — Զեռ. Երեւանի, թ. 2653:

3. Աւետարան, 1342ին օրինակած է: Մաղկող իր որդին Աւետիս — Զեռ. Վիհննայի, թ. 849:

4. Աւետարան, 1344ին — Զեռ. Երեւանի, թ. 7637:

5. Աւետարան, 1346ին, Սրբահամ Երէցի խնդրանքով: Մաղկած և կաղմած է իր որդին Աւետիս: — Զեռ. Երեւանի, թ. 7636:

6. Ասունածաշունչ, 1346ին, Գրիգոր և Վահան արեղաներու խնդրանքով — Յիշտ. ԺԴ. Դարի, թ. 436:

7. Աւետարան, 1347ին, Մկրտիչ Երէցի համար: Նկարագարդած է իր որդին Աւետիս սարկաւագ՝ բարձր արուեստով: — Զեռ. Երեւանի, թ. 7742:

8. Ճաղցնուիր, 1347ին: Ստացողք բաղումք, եկեղեցականք, աշխարհական արհեստաւորք, և բարեպաշտ կանայք: — Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 359–367: Զեռ. Երեւանի, թ. 3797:

9. Ճաղց, 1358ին, Սարդիս Քահանայի փափաքով: — Զեռ. Անկիւրիոյ, թ. 156:

10. Ճաղց, 1358ին, Յովհաննէս և Յոհաննէս կրօնաւորներու փափաքով: — Զեռ. Երեւանի, թ. 7435:

11. Տօնապատճառ , 1359ին , Մարդարէ արեղայի խնդրանքով .— Զեռ . Երեւանի , թ . 2040 :

12. Մեկնուրիւն Կարսողիկէից Թոդրոց՝ Մարդիս Վարդապետի , 1360? -ին , Անդր Վանքի միարաններուն փափաքով .— Յիշտ . ԺԴ . Դարի , թ . 567 : Զեռ . Երեւանի , թ . 1529 :

13. Բան Գիմադրական Ընդդեմ Հերձուածողաց՝ Մտեփանոս Օրբէլիանի , 1363ին .— Զեռ . Երեւանի , թ . 6886 :

Բ. Աւետիս սարկաւագ , Գրիչ , Շաղկող և Կազմող , (1325? - 1381?) , որդի Նատերի եւ Մշհաւանի : Նախ աշակերտ եւ ապա գործակից իր Հօրք : Իր գործունէութեան շըջանը տեւած է Երեք տասնեակ տարիներ , 1342-1371 : Այդ ժամանակաշրջանէն ծանօթ են տասնեակ մը գործեր , Հետեւեալ յաջորդականութեամբ .

1. 1342ին ծաղկած է իր Հօրք օրինակած Աւետարանը .— Զեռ . Վիեննայի , թ . 849 :

2. 1346ին ծաղկած եւ կազմոծ է իր Հօրք օրինակած Աւետարանը .— Զեռ . Երեւանի , թ . 7636 :

3. 1347ին նկարադարդած է իր Հօրք օրինակած Աւետարանը .— Զեռ . Երեւանի , թ . 7742 :

4. 1348ին գրած եւ յաջողապէս նկարագրագած է Աւետարան մը , բարեկաչտ Պօղոսի խնդրանքով .— Զեռ . Երեւանի , թ . 7857 :

5. 1355ին օրինակած է Ժողովածու մը՝ իրեն Համար : Բնդօրինակութեան մէկմասը կատարած է իր ծերունի Հայրը .— Յիշտ . ԺԴ . Դարի , թ . 495 : Զեռ . Երեւանի , թ . 6938 :

6. 1358ին օրինակած է Նարիկ մը Վարդառն միայնակեցի փափաքով .— Յիշտ . ԺԴ . Դարի , թ . 523 :

7. 1362ին օրինակած է Դ. Արիսպագացի Յաղազ Երկնայիմ Քահանայապետութեանց գիրքը՝ Արքաստացի Յովհաննէս կրօնաւորի Հրամանով .— Յիշտ . ԺԴ . Դարի , էջ 456-457 :

8. 1363ին ծաղկած է իր Եղրօր Մտեփանոս Քահանայի օրինակած Ժողովածուն .— Յիշտ . ԺԴ . Դարի , թ . 556 :

9. 1365ին օրինակած է Ճաշոց մը Մարդիս Քահանայի խնդրանքով .— Զեռ . Երեւանի , թ . 4656 :

10. 1371ին ծաղկագորդած է Ճաշոց մը՝ օրինակութած Աւետիս Քահանայի որդի Յովհաննէս զրչի ձեռքով .— Յիշտ . ԺԴ . Դարի , թ . 613 : Զեռ . Երեւանի , թ . 7449 :

Գ. Մտեփանոս Քահանայ , Գրիչ , Շաղկող և Կազմող (1327? - 1402) , որդի Նատերի եւ Մշհաւանի , Եղրայր Աւետիս սարկաւագի , Հայր Յովհաննէս Գրչի , աշակերտ Նատեր Գրչի եւ ուսուցիչ Պաւղոս Գրչի (Յիշտ . ԺԴ . Դարի , էջ 460 , 623) : Իր գործունէութեան շըջանը տեւած է աւելի քան կէս դար , 1347-1401 : Այդ ժամանակաշրջանէն ծանօթ են աւելի քան Երկուամսեակ մը Երկեր : Կը ներկայացնենք ժամանակադրական կարգով :

1. 1347ին օրինակած է Տօնապատճառ մը : Կազմող՝ Նատեր : Մտացող՝ Աստուածատուր եւ Վարդառն Քահանայք .— Զեռ . Ս . Յ . թ . 372 :

- 2· 1352ին օրինակած է Աստուածաշունչ մը Քրիստոսուր կրօնաւորի փափաքով.— Յիշտ. ԺԴ. Դարի, թ. 478:
- 3· 1352ին օրինակած է Աւետարան մը Յովհաննէս կուսակրօն քահանոյի բաղմանոք.— Զեռ. Երեւանի, թ. 7598:
- 4· 1354ին օրինակած է մէկ Մեկնուրին Եսայեայ՝ Կիւրդի Աղեքսանդրացոյ, Դերջոնիկի Մինաս կուսակրօն քահանային համար.— Հայկ. Թրդմ. էջ 507-508:
- 5· 1356ին օրինակած է Մարգարեուրին Եսայեայ եւ Թուղթ Պաւոսի, Յովհաննէս կուսակրան քահանայի հրամանով.— Ն. Թարամեանց, Յուցակ Հայ. Զեռ. Պէրլինի, 1888, թ. 5:
- 6· 1357ին օրինակած է Մեկնուրին Քերականուրեան՝ Վարդան Վարդապետի, Կարապետ ընթերցասէր քահանային խնդրանքով.— Զեռ. Երեւանի, թ. 2371:
- 7· 1363ին օրինակած է Փողովածու մը Աերաստացի Յովհաննէս կրօնաւորի հրամանով.— Յիշտ. ԺԴ. Դարի, թ. 556:
- 8· 1368ին, մասամբ դրած եւ աւարտած է Աստուածաշունչ մը: Ստացող՝ Յովհաննէս կրօնաւոր քահանայ.— Զեռ. Երեւանի, թ. 2705:
- 9· 1377ին օրինակած է ձաշոց մը: Ստացող՝ Մանուէլ քահանայ.— Զեռ. Ս. Յ. թ. 12:
- 10· 1381ին օրինակած է ձաշոց մը: Ստացող՝ Թադէոս քահանայ.— Զեռ. Երեւանի, թ. 7477:
- 11· 1391ին ծաղկած եւ կազմած է Մարկոս Գրչի օրինակած ձաշոցը: Ստացող՝ Առաքել Երէց— Յիշտ. ԺԴ. Դարի, թ. 740: Զեռ. Երեւանի, թ. 7446:
- 12· 1400ին օրինակած է մէկ Գիրք Պարապմանց՝ Կիւրեղ Աղեքսանդրացիի, Խաչատուր Վարդապետի պատուէրով.— Զեռ. Ս. Յ. թ. 1206:
- 13· 1401ին օրինակած է Նարեկ մը Մելոենցի Արքահամ քահանայի ցանկութեամբ.— Զեռ. Երեւանի, թ. 3863:
- Դ. Գրիգոր Սրկ. Գրիչ, 1330? – 1381?, որդի Նատեր Գրչի, եւ աշակերտ իր Երէց եղոր Աւետիսի: Խաղուաց նահանգին եղիսկոսոս ձեռնադրուած է 1358ին.— Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 436, 457:
- 1· 1357ին օրինակած է Աւետարան մը Մարդարէ կրօնաւորի համար.— Զեռ. Երեւանի, թ. 8388:
- 2· 1358ին մասնակցած է իր հօրը օրինակած ձաշոցին.— Զեռ. Անկիւրիսյ, թ. 156:
- Ե. Յովհաննէս Քահանայ Մաղկող եւ Ռսկող, 1360? – 1420?, որդի Ստեփանոս Քահանայի, թոռ Նատեր Գրչի:
- 1· 1391ին, ըստ Երեւայթին, մասնակցած է Մարկոս Գրչի օրինակած եւ իր հօրը ծաղկած ձաշոցի ծաղկումին.— Յիշտ. ԺԴ. Դարի, էջ 595: Զեռ. Երեւանի, թ. 7446:
- 2· 1401ին ծաղկած է իր հօրը Ստեփանոս Քահանայի օրինակած նարեկը.— Յիշտ. ԺԴ. Դարի, Ա. Մատն, էջ 20: Զեռ. Երեւանի, թ. 3863:

Ն. ԱՐՔԵՊՈ. ՇՈՒԱԿԱԿԱՆ